

ՍԱԿՐՈՏՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՅԱՆԻՉՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԿԱՏԵՍՍԱՆ ՑԻՄԱԽՆՈՒՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՅՈՒՄ

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից 2009 թվականի ապրիլ¹ և հոկտեմբեր² ամիսների դրույթամբ հրապարակված «Համաշխարհային տնտեսության տեղականի» երկու զեկույցներում փորձ է արվել կանխատեսումներ անել ամրող համաշխարհային տնտեսության զարգացման վերաբերյալ մինչև 2014 թվականն ընկած ժամանակաշրջանի համար: Այս երկու զեկույցներում ուսումնասիրվել է նաև և առաջ համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունն առանձին երկրների տնտեսությունների մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության միտումների վրա, ինչպես նաև առանձին տարածաշրջաններում գնահատվել են ճգնաժամի ազդեցությունները, այսինքն՝ դիտարկումները կատարվել են տարածաշրջանային և առանձին երկրների մակարդակներով:

Հարկ ենք համարում նշել, որ զեկույցների վերնագրերից բխում է հետևյալը, այն է՝ ապրիլյան զեկույցում ամրողությամբ ճգնաժամի ընթացքն է և ենթադրվում է, որ պետք է եկող ժամանակաշրջանում սկսվի առանձին երկրների տնտեսությունների վերականգնման գործընթացը, իսկ 2009-ի հոկտեմբերի զեկույցում արդեն նշվում է ճգնաժամի կայունության կամ անկման ստորին կետին հասնելու ու արդեն վերականգնման գործընթացի շարունակականության մասին: Զեկույցներում ներկայացվող մակրոտնտեսական որոշ ցուցանիշների կանխատեսման առումով առավել վատատեսական բնույթ ունի ապրիլյան զեկույցը, որից կարելի է ենթադրել, որ ԱՄՀ-ի նման հեղինակավոր կազմակերպության փորձագետներն առավել հոռետնեսական են պատկերացրել ճգնաժամի խորության կամ անկման տեմպերի իրական չափերը, որը վերաճայվել է արդեն 2009-ի հոկտեմբերին, և կանխատեսումներն առավել լավատեսական կամ կարելի է ասել նաև իրական բնույթ են ստացել, քանի որ 2009-ի ապրիլից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում շատ երկրների տնտեսություններ, այդ թվում՝ նաև Հայաստանի տնտեսությունը հասավ իր անկման ստորին կետին³:

Ցուրաքանչյուր երկրի տնտեսության ճնահատման համար ամենակարևոր մակրոտնտեսական ցուցանիշը ՀՆԱ-ն է, իսկ այդ ցուցանիշը, եթե դիտարկում են տարածաշրջանային կտրվածքով, որը պարզապես տվյալ տարածաշրջանում ընդգրկված երկրների ՀՆԱ-ների հանրագումարն է, ապա ստացվում է տարածաշրջանային ՀՆԱ-ն կամ տվյալ տարածաշրջանում թողարկված համախառն արդյունքը: Նույն տրամաբանությամբ հաշվարկվում է նաև ամրող աշխարհի տնտեսության ՀՆԱ-ն կամ թողարկման համախառն արդյունքը: Հարկ ենք համարում նշել, որ թեկուզ կիրառական նշանակության տեսանկյունից առավել հասկանալի է «աշխարհի ՀՆԱ» հասկացությունը, սակայն որպես նակրոտնտեսական ցուցանիշ այն հասկանալի չէ, քանի որ «ներքին» բառը ՀՆԱ հասկացության մեջ առնչվում է կոնկրետ երկրի ներքին տնտեսությանը: Այդ իսկ պատճառով առավել ճիշտ է «աշխարհի համախառն թողարկում կամ արտադրանք» արտահայտությունը: Այս ցուցանիշը կարևորվում է, այն պարզ պատճառով, որ ֆինանսատնտեսական ճգնաժամն ընդգրկեց այս կամ այն չափով աշխարհի բոլոր երկրները և, հետևապես, անկման կամ ճգնաժամային ազդեցությունները նկատվեցին աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Որպեսզի պատկերացում կազմենք, թե վերջնական արդյունքում ինչպիսի կորուստներ կրեց աշխարհն այս ճգնաժամից և եթե կվերադառնախսկին՝ 2008-ի առաջին կիսամյակի ցուցանիշների մակարդակին, ապա պետք է ուսումնասիրել աշխարհի ՀՆԱ-ն կամ թողարկումը:

¹ World Economic Outlook April 2009, Crisis and Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, 251 p.


² World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, 208 p.

³ 2009թ. ամփոփ ցուցանիշները նախատեսվում է, որ կիրապարակվեն 2010թ. ապրիլյան զեկույցում, այդ իսկ պատճառով հոդվածում թերված 2009-ի և հետագա տարիների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացվել են որպես կանխատեսումներ:

2001-2008թթ. ընթացքում աշխարհի ՀՆԱ-ն գրեթե կրկնապատկվել է՝ 31 տրլն դոլարից հասնելով 60 տրլիլիոնի: Դիտարկվող ժամանակաշրջանի առաջին կետում աշխարհի ՀՆԱ-ն աճում էր տարեկան 3-4 տրլն դոլարով, իսկ վերջին մի քանի տարիներին այն մոտեցել էր 5-6 տրլն ԱՄՆ դոլարի աճի մակարդակին:

Գծապատկեր 1

Աշխարհի տնտեսության քողարկման արդյունքները¹ (մլրդ դոլար)



Ապրիլյան զեկույցում կանխատեսվում է, որ 2009 և 2010 թվականներին աշխարհի ՀՆԱ-ն կնվազի՝ հասնելով համապատասխանաբար 54 և 55 տրլն դրարի, որը տոկոսային նվազման և աճի առումներով համապատասխանաբար կազմում է -2.5 և 1%, իսկ 2014-ին՝ 70 տրիլիոնի: Սուպել լավատեսական են հոկտեմբեր ամսվա զեկույցի ցուցանիշները, և նշվում է, որ աշխարհի ՀՆԱ-ն 2009-ին կնվազի 3 տրիլիոնով, 2010-ին գրեթե կհավասարվի 2008-ի մակարդակին, այսինքն՝ 60 տրլն դրարի, իսկ 2014-ին կարծանագրվի 14 տրլն դրարի աճ:


Այս ցուցանիշները, որոնք ներկայացված են շուկայական գներով, տարրերվում են իրական ցուցանիշներից, քանի որ 2009-ին իրական տնտեսական անկումն ամրող աշխարհի տնտեսության մեջ կկազմի -1.1%, 2010-ին կարծանագրվի 3.1% աճ, իսկ 2014-ին այն կհասնի 4.5%-ի: Ապրիլյան գեկույցում նաև նախատեսվում էր, որ աշխարհի տնտեսության իրական տնտեսական անկումը 2009-ին կկազմի -1.3, 2010-ին կարծանագրվի 1.9%-ի աճ, իսկ 2014-ին այն կհասնի 4.8%-ի, այսինքն՝ բավականին մեծ շեղումներ են առկա հատկապես 2010թ. կանխատեսումների մասով:

Ստորև ներկայացված աղյուսակում հատակ երևում են երկու գեկույցներով արված կանոնադրությունների սուրբին կետերը և աշխարհի տնտեսության տնտեսական աճի անկման չափերը:

Տարածաշրջանային զարգացման առումով 2009-ի ավարտին ամենանպաստավոր դիրքում են գտնվելու Ասիայի զարգացող երկրները և արձանագրելու են 6.2% տնտեսական աճ: Այս վերջին ցուցանիշից կարելի է հետևորդուն անել նաև, որ ճգնաժամային իրավիճակների առումով ամենակայուն տնտեսություն կամ ճգնաժամային իրավիճակներում առավել մեծ հաղթահարման ներուժ ունեն Ասիայի տարածաշրջանի զարգացող երկրները, որոնք իրենց ներքին միջոցները կարողացել են առավել արդյունավետ դիվերսիֆիկացնել և հարմարվել արտաքին միջավայրում տեղի ունեցող բացասական ազդեցություններին:


¹ World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 169. World Economic Outlook April 2009, Crisis and Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 189.

Աշխարհի տնտեսության աճի միտումները¹
 (Տարեկան տոկոսային փոփոխություն)



Սա նաև կարող է հիմք հանդիսանալ տնտեսական քաղաքականություն մշակելու և իրականացնելու առումով՝ գործընկերներ ընտրելու համար, քանի որ գործընկերների տնտեսությունների փոփոխություններն են շատ դեպքերում շրջայական ռեակցիայի ձևով տվյալ երկրի տնտեսությանը մեծ վճար հասցնում: Հետևաբար, Հայաստանը, հաշվի առնելով այս հանգամանքը, իր գործընկերային և տնտեսական հարաբերությունների ընդայնումը 2010-2011թթ. ընթացքում առավել նպատակահարմար է, որպեսզի ուղղորդի ասիական զարգացող երկրների հետ տնտեսական կապերի ընդլայնման ուղղությամբ:

**Աշխարհի տնտեսության առանձին տարածաշրջանների
 ՀՆԱ-ի աճի միտումները²**
 (%-ներուվ)



2008-ին համաշխարհային տնտեսական ճգնաժամի պարագայում ամենալավ դիրքերը տնտեսական աճի առումով ունեցել են Արևոտնական՝ 6.4%, Ինդիա՝ 4%, Կիարդուլ՝ 3.6%, Հունաստանը՝ 2.8%: Ի դեպքում, որ այս երկրների շարքում միակ երկիրը, որ 2007-ին արձանագրել է

¹ World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 169. World Economic Outlook April 2009, Crisis and Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 189.

² World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, p. 169.

երկնիշ տնտեսական աճ (10.4%), եղել է Սլովակիան: Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ թեկուզ կան մի շարք երկրներ, որոնք ունեն զարգացման աճի տոկոսային փոքր կշիռ, նրանք ավելի դժմացկուն են գտնվել ճգնաժամի ժամանակաշրջանում, և տոկոսային անկումներն ել ավելի փոքր են: Օրինակ, Ավստրալիայում 2008 և 2009 թվականների տնտեսական աճերի տոկոսային տարրերությունը կազմում է ընդամենը 1.8%: Այլ կերպ ասած, ճշշտ տրամաբանությունը շատ դեպքերում կառուցվում է ոչ միայն բացարձակ թվերով տարրեր երկրների տնտեսությունները միմյանց հետ համեմատելով, այլ նաև տվյալ երկրի կայունության գործոնին մեծ դեր տալով:

Աշխարհի հիմնական զարգացած երկրներում ամբողջ 2009 թվականի ընթացքում կնկատվի իրական համախառն ներքին պահանջարկի անկում -1.8-ից -6.4%-ի միջակայքում, որը բավականին լուրջ ցուցանիշ է և խոսում այն մասին, որ շատ ու շատ արտադրողներ ստիպված են լինելու 2009-ին և իրենց արտադրության ծավալները բավականին կրճատել, ինչպես նաև իրենց տնտեսական գործունեությունն ուղղորդել պահանջարկի խթանման քաղաքանությամբ: Կանխատեսվում է նաև, որ օրինակ ԱՄՆ-ում 2010-ին իրական ներքին պահանջարկը պետք է աճի 1.7%-ով, որը 0.3%-ով բարձր է 2007-ի մակարդակից, այսինքն՝ ԱՄՆ-ում, որտեղ հիմնականում տնտեսության ամբողջական պահանջարկի խթանման ակտիվ քաղաքանություն է տարվում, 2010-ին արդեն արդյունքներն ակնհայտ կլինեն:

Որոշ անդրադարձ կատարենք նաև զարգացած երկրների տնտեսությունների իրական ՀՆԱ-ի առանձին քաղաքիչների վերլուծությանը, քանի որ որպես այդպիսին ՀՆԱ-ն ամփոփ ցուցանիշ է, իսկ ազգային հաշիվների համակարգում գոյություն ունեցող ՀՆԱ-ի հաշվարկման երեք եղանակները հճարավորություն են ընձեռում ծախսային, եկամտային և արտադրական կամ ավելացված արժեքի մերողներով ՀՆԱ-ի հաշվարկման շնորհիվ կոնկրետ վերլուծություններ անել՝ տնտեսության զարգացման քաղաքիչներից ելնելով:


Սուազին քաղաքիչը մասնավոր սպառման ծախսերն են, որոնք զարգացած երկրներում 2008-ին կրճատվել են ընդհանուր առմամբ 0.4%-ով, ամենացածր տեմպերը գրանցվել են Գերմանիայում՝ -0.3%: Հետաքրքրականն այն է, որ 2009-ին նախատեսվում է, որ դրանք կրճատվեն ավելի մեծ չափով՝ -1%, և մյուս կողմից բավականին մեծացել են նաև կրճատման միջակայքը, ամենացածր տեմպերը կգրանցվեն 2009-ին Բաղանիայում՝ -5.1%, իսկ ամենաբարձրը կլինի Ֆրանսիայում՝ 0.7%, որոշ չափով սպառման ծախսերը կվերականգնվեն 2010-ին, սակայն որոշ երկրներում՝ Գերմանիա, Իսպանիա, դրանք կշարունակեն պահպանել անկման տեմպերը: Այս ամենից կարելի է ենթադրել, որ 2008-ի ճգնաժամը սպառողներն իրենց վրա առավել մեծ չափով են զգացել 2009-ին, իսկ 2008 թվականին այն համեմատաբար մեղմ է եղել, որովհետև մարդիկ իրենց խնայողությունները օգտագործել են սպառման նախակառվ, իսկ 2009-ին սոլիված են եղել ծախսերն առավել մեծ չափով կրճատել, քանի որ խնայողությունները նվազել են: Նոյնը չենք կարող ասել պետական կամ հանրային սպառման վերաբերյալ, որը շատ երկրներում 2008-ից սկսած ավելացել է: Դա իր տրամաբանական բացատրությունն ունի՝ պետության միջամտության սահմանների ընդլայնում, ազգայնացման քաղաքականության կամ մասնավոր ձեռնարկությունների ակտիվների ձեռքբերում՝ քոյլ շտալու համար, որ դրանք սնանկանան, ինչպես նաև ծախսերի ընդլայնման միջոցով ներքին պահանջարկի խթանում և սոցիալապես բույլ խավերին աջակցության ցուցաբերում:

Օրինակ, ԱՄՆ-ում 2008-ին պետական սպառման ծավալներն ավելացել են 3%-ով, նախատեսվել էր, որ 2009-ին դրանք կավելանան 2.5%-ով, իսկ 2010-ին՝ 2.9%-ով:

Չուսպ և հանրային սպառման ծախսերի կրճատման քաղաքականություն է իրականացնում նապենիան, քանի որ 2008-ին ծախսերն աճել են 0.8%-ով, իսկ 2009-ին նախատեսվել է 1.6%-ային կետով աճ: Միայն 2010-ից սկսած՝ հանրային ծախսերի աճի տեմպերը կկազմեն 2.8%, այսինքն՝ նապենիան պետական ծախսերի ավելացման միջոցով տնտեսության խթանման լծակը որպես այդպիսին կասի կիրառել միայն 2010 թվականից:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանում 2008-ին արձանագրվել է 3% տնտեսական աճ նախորդ տարվա 5.5%-ի փոխարեն, իսկ 2009-ին նախատեսվում է -5% տնտեսական աճկում, 2010-ին՝ 1.8% և 2014-ին՝ 4% տնտեսական աճ, այսինքն՝ այս տարածաշրջանը ևս մոտ 5 տարի զարգացման տեմպերով հետընթաց կունենա: Տարածաշրջանային համադրություն անելով՝ կարող ենք եզրակացնել նաև, որ ԱՊՀ երկրներից հետո ամենամեծ

անկում ապրած տարածաշրջանն է Կենտրոնական և Արևելյան Եվրոպան, քանի որ օրինակ նախատեսվել է, որ 2009-ին Լիտվայում անկումը կկազմի -18.5%, իսկ Լատվիայում՝ -18%, Էստոնիայում անկման տեմպերը կլինեն -14%, իսկ հարևան Թուրքիայում կարձանագրվի -6.5% տեսչության անկում: Կարելի է ասել, որ ամբողջ աշխարհի տնտեսության մեջ անկման տեմպերով բարյան երկրներն առաջատարների շարքերում են:



ԱՊՀ տարածաշրջանն անկման տեմպերով 2009-ին աշխարհում առաջինն է, քանի որ տնտեսական անկումը կկազմի -6.7%, իսկ ամենամեծ տնտեսական անկում ԱՊՀ-ում կարձանագրվի Հայաստանում՝ -15.6%, որին կիաջորդի Ուկրաինան, որտեղ անկման տեմպերը կլինեն 14%, այսինքն՝ Հայաստանի տնտեսությունն իր անկման տեմպերով աշխարհում երրորդ տեղն է զրադեցնում Լիտվայից և Լատվիայից հետո, իսկ Ուկրաինան և Էստոնիան միմյանց մեջ կիսում են 4-րդ և 5-րդ տեղերը:

Ուսումնասիրելով և համարյալով ՎԶԵԲ-ի՝ 2010-ի հունվարի 21-ին արված կանխատեսումները՝ նկատում ենք, որ դրանք մի շարք երկրների համար փոփոխության են ենթարկվել:

Բավականին հետաքրքիր է, որ Կենտրոնական Եվրոպայի և բարյան որոշ երկրների ցուցանիշները վատացել են: Օրինակ, Էստոնիայում հոկտեմբերի կանխատեսումներով անկումը պետք է կազմեր -13.2%, իսկ 2010-ի հունվարին կանխատեսվում է -14.7% անկում, նույն կերպ Լատվիայում կանխատեսվում էր -16.0% անկում, սակայն վերանայումից հետո այն հասցել է -17.9-ի: Դրական տեղաշարժ է կանխատեսվել Լիտվայում, որտեղ -18.4 անկման փոխարեն սպասվում է -15.2% անկում: Հայաստանի համար անկման կանխատեսումները ևս խորացվել են և նախատեսվում է -16.3%, որը նախորդ կանխատեսումից ավելի է 2%-ով, այսինքն՝ հոկտեմբերին կանխատեսվում էր -14.3% անկում, իսկ ինչպես ցույց տվեցին ՀՀ ԱՎԾ հրապարակումները, անկումը կազմել է -14.4%, այսինքն՝ ՎԶԵԲ-ի կողմից հոկտեմբերին առավել մեծ ծցությամբ են կատարվել կանխատեսումները, իսկ ԱՄՀ-ն 1.2%-ով ավելի մեծ անկում էր կանխատեսել: Ուկրաինայի համար կանխատեսվում էր -14.0% անկում, սակայն վերանայվել է և 0.5 տոկոսային կետով բարձրացվել՝ -14.5%: Եթե համեմատում ենք Հայաստանի և անցումային փուլում գտնվող մյուս երկրների ցուցանիշները, ապա նկատում ենք, որ եթե հիմք ենք ընդունում ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2010-ի հունվարի 25-ին հրապարակված ՀՆԱ-ի անկման -14.4% ցուցանիշը, ապա անկման տեմպերով վերջին 5-րդ տեղում ենք, իսկ ըստ ՎԶԵԲ կանխատեսումների, վերջին երկրորդ տեղում ենք:

Ստացվում է այնպես, որ հետխորհրդային երկրներն ամենավատ վիճակում են հայտնվել այս ճգնաժամի պատճառով, և բավականին մեծ զանգեր կպահանջվեն նրանցից ճգնաժամի


¹ World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, pp. 171-172.

ճիրանմերից դուրս գալու համար: 2009թ. դրությամբ հարաբերականորեն տարին լավ դիրքում կփակեն Աղբեջանը՝ 7.5%, Ուզբեկստանը՝ 7% և Թուրքմենստանը՝ 4% տնտեսական աճերով, իսկ Ռուսաստանի Դաշնությունում կգրանցվի -7.5% տնտեսական աճերում: Հայաստանում 2009-ին կարձանագրվի 1.2% և 2014-ին 4.5% տնտեսական աճ, այսինքն՝ նախկին տնտեսական զարգացման մակարդակին հասնելու մասին առաջիկա 5 տարիների ընթացքում խոսք լինել չի կարող: Դեռք է նշել, որ Հայաստանը 1995-2000թթ. ընթացքում է միայն ունեցել այսքան ցածր տեսապերով աճի միտումներ:

Գծապատկեր 5

Անցումային և զարգացող երկրների տնտեսություններ: Իրական ՀՆԱ-Ը¹

(%-ներով)



Հատկանշական են Չինաստանի և Հնդկաստանի տնտեսությունների զարգացումը և կայունությունը: Այս երկու պետությունները, հատկապես Չինաստանը 2008-ին ունեցել է 9% տնտեսական աճ, 2009-ին այն կկազմի 8.5%, իսկ 2010-ին՝ 9%, մինչև 2014-ը կանխատեսվում է, որ իրական ՀՆԱ-ի աճի տեսապերը կմոտենան 9.5%-ի, որն, իհարկե, Չինաստանի տնտեսությունը կդարձնի լուրջ մրցակից շատ ու շատ զարգացած երկրների համար:

Ուսումնասիրելով աշխարհի տնտեսության մեջ տեղի ունեցող ինֆլյացիոն միտումները՝ կարելի է պատկերացում կազմել առանձին տարածաշրջաններում դրամավարկային քաղաքականության, ինչպես նաև գների աճի միտումների վերաբերյալ, որոնք անկասկած ճգնաժամային իրավիճակներում փոփոխության են ենթարկվում:

ՀՆԱ-ի դեֆլյատորների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զարգացած երկրներում 2009-ից սկսած դրամք նվազման միտում են ցուցաբերելու՝ 2009-ին կազմելով 0.9%, 2010-ին՝ 1.0%, իսկ 2014-ին՝ 1.6%, իսկ մինչ այդ դրամք տատանվել են 2-2.3% միջակայքում: ԱՄՆ-ում ՀՆԱ-ի դեֆլյատորը ևս անկում է ապրում, չնայած ԱՄՀ-ի ապրիլյան գեկույցում նախատեսվում էր, որ 2009-ին այն կկազմի 0.9%, իսկ 2010-ին՝ 0.4%, իսկ արդեն եռկտեմբերին վերանայված տարրերակում՝ 1.6% և 1.5% համապատասխանաբար: Սա խոսում է այն մասին, որ արդյունաբերության ոլորտում սկզբնական ջրանում գներն ավելի արագ են անկում ապրել, իսկ հետագայում արդեն տնտեսության մեջ դրամական միջոցների ավելացման արդյունքում տնտեսությունը կարողացել է գնողունակություն ապահովել, որը չենք կարող ասել եվրոյի գոտու երկրների համար, քանի որ լրիվ հակառակ պատկերն է տիրում և ապրիլյան գեկույցում նախատեսված է եղել, որ ՀՆԱ-ի դեֆլյատորներն 2009 և 2010թթ. կկազմեն 1%, սակայն եռկտեմբերի կանխատեսման ժամանակ դրամք իջեցվել են մինչև 0.6%:

Սա խոսում է այն մասին, որ Եվրոպական կենտրոնական բանկն, ի տարրերություն Դաշնային պահուատային համակարգի, խթանման առավել գուստ դրամավարկային քաղաքականություն է իրականացնում:

¹ World Economic Outlook October 2009, Sustaining the Recovery, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, pp. 173-176.

2009-ի վերջում կանխատեսվում է, որ ԱՄՆ-ում և Շապոնիայում սպառողական գների ինդեքսները կիշնեն -0.4% և $-1.1\%-$ ային կետով՝ այն պարագայում, եթե 2008-ին այդ երկրներում պարզապես արձանագրվել էր վերջին 10 տարիների ամենաբարձր աճը, որը երբեւ եղել էր այդ երկրների տնտեսության մեջ՝ 3.8 և 1.4% համապատասխանաբար: Իհարկե, թեկուզ այդ երկրներում, որոնք, կարելի է ասել, զարգացած տնտեսություն ունեցող երկրների մեջ առաջատար են, նկատվում են միտումներ, որոնք բացասաբար կարող են ազդել: Անցումային և զարգացող տնտեսություն ունեցող երկրներում ԱԳԲ-ի աճի միտումներն ավելի բարձր են: Օրինակ, 2008-ին այն կազմել է 9.3% , իսկ 2009-ին կանխատեսվում է՝ 5.5% , 2010-ին՝ 4.9% , իսկ 2014-ին՝ 4.0% :

Բավականին հետաքրքրական է այն, որ Շապոնիայի տնտեսության մեջ ԱԳԲ-ը վերջին տաս տարում տատանվել է $-0.9\%-$ ից 0.3% միջակայրում: Այս պարագայում քավականին ցածր տոկոսադրույթներով տնտեսության վարկավորում իրականացնելը բավականին հեշտ է, ինչպես նաև տնտեսական աճ ապահովելը, իսկ բարձր ինֆլյացիոն ռիսկերի պարագայում տնտեսության մեջ տոկոսադրույթների արդյունավետ կառավարման քաղաքականություն իրականացնելը պարզապես դառնում է անհնար: Ահա թե ինչով է շատ դեպքերում բացատրվում այդ երկրների զարգացման ընթացքը:

Հետևաբար պետք է գիտակցված ճեղուկ համագործակցել այն երկրների հետ, որոնք ունեն ցածր ինֆլյացիոն ռիսկեր, ինչպես նաև ցածր տոկոսադրույթներ, մյուս կողմից հասնել վստահության այդ երկրների մոտ և թեկուզ իրենց երկրի միջին տոկոսադրույթից էլ բարձր տոկոսադրույթներով վարկեր ներգրավել սեփական երկրի տնտեսությունը զարգացնելու համար:

Տարածաշրջանային առումով ամենաբարձր և երկնիշ քվով ինֆլյացիոն միտումներ արձանագրվել են միայն ԱՊՀ տարածաշրջանում, 2008-ին ինֆլյացիան ԱՊՀ երկրներում կազմել է 15.6% , կանխատեսվում է 2009-ին 11.8% , 2010-ին՝ 9.4% , իսկ մինչև 2014-ը նախատեսվում է այն իշեցնել մինչև 6.9% :

Այս համատեքստում պետք է նշել, որ շատ մեծ նշանակություն ունի տարածաշրջանային համահունչ դրամավարկային քաղաքականություն վարելու հանգամանքը, քանի որ և առևտրային հարաբերությունները, և միմյանց հակասող քաղաքականությունները կարող են իրենց բացասական ազդեցությունը բողնել տվյալ տարածաշրջանի այն տնտեսության վրա, որը կիրքի տարբերվել իրեն շրջապատող երկրներից: Այսինքն՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ միմյանց հակառակ ուղղություններով վարվող տնտեսական քաղաքականությունները հարևան և փոխհապակցված երկրներում տնտեսական անկանու վտանգի առաջ կարտ են կանգնեցնել այդ երկրներին:

Մեծ քանյակի շրջանակներում իրականացվող տնտեսական քաղաքականության միասնականացման փորձերն ուղղված են նմանատիպ խնդիրների լուծմանը: Դրան են ուղղված նաև ԱՍՀ նախագահ Ռուսիկ Ստրոսս Կամի այն խոսքերը, որ աշխարհի առանձին երկրների տնտեսությունները պետք է ճիշտ ժամանակին դուրս գան ճգնաժամից, և եթե որևէ մեկը շուտ դուրս գա ճգնաժամից և փորձի դադարեցնել իր հականաժամանակային միջոցառումները, կիսանգարի մյուսներին, իսկ եթե ուշանա, ապա կարող է նոր ճգնաժամի պատճառ հանդիսանալ: Դասական օրինակով դա նման է տնտեսական պարբերաշրջանի տարբեր մակարդակների վրա գտնվող երկրների, որոնց քաղաքականությունները միմյանց խանգարում են և հակառակ ուղղվածություն ունեն: Շատ դեպքերում նման հիմնահարցեր առաջանում են ԱՄՆ-ի և Եվրոպայի միջև՝ կապված ամբողջական պահանջարկի խթանման քաղաքականության հետ:

Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող զարգացումների հաշվառումը, այն էլ կանխատեսման համատեքստում, անհրաժեշտ են, որպեսզի յուրաքանչյուր երկիր իր տնտեսական քաղաքականությունը կառուցելիս հաշվի նատի համաշխարհային տնտեսական զարգացումների կարճաժամկետ և միջնաժամկետ տնտեսական փոփոխությունների հետ: Եվ ավելի լավ է պատկերացում ունենա կանխատեսման առանձին սցենարներով զարգացման վերաբերյալ, քան թե իր տնտեսական քաղաքականությունը կառուցի լիարժեք անորոշության պայմաններում: